

կոչեցին զանուն նորա Պապ, եւ մնուցին զնա եւ ի չափ հասուցին: 75 Եւ իբրեւ ջրթափեաց եւ եղեւ հուժկու, ետուն զնա պաղանդ ի դուռն կայսերն յերկիրն Յունաց:

76 Իսկ Փառանձեմն ի մեծ նախանձու եւ դիտութեամբ զնայր ընդ Ողոմպիսոյն, եւ խնդրէր սպանանել զնա դեղովք: 77 Իբրեւ ոչ ինչ հնարս մեքենայից չկարէր գտանել, վասն զի անձինն իւրում կարի զգուշ կայր, մանաւանդ ի կերակրոց եւ յըմպելեաց, բայց զիւրոց նաժշտացն կերակուրս արարեալ եւ կամ զնոցին պարզեալ զգինի ճաշակեր. եւ եթէ ոչ ինչ գտանէին հնարք դեղել զնա մահուան դեղաւքն, ապա դրան երեց ոմն արթունի՝ որ էր ի ժամանակին յայն, որում անուն Մրջիւնիկ, յԱրշամունեաց տեղեացն ի նահանգէն Տարաւն գաւառէն, զնա ի բանս<sup>1</sup> արկաներ Փառանձեմն անաւրէնն: 78 Չանարժանս զանկատար զանջնջելի զչարեացն մեղացն չմոռացական տանջանացն կատարեաց զգործսն զանարժանս զանտես զանլուր, այս ինքն ընդ կենաց դեղն զդեղ մահուն խառնելով. որ ուրեք երբեք այսպիսի գործք յումեքէ ի վերայ երկրի ոչ գործեցան: 79 Ընդ տերունական ընդ սուրբ ընդ աստուածական մարմինն ընդ հացն աւրիւնաց խառնէին զդեղն սատակման, երեցն Մրջիւնիկ անուն, տալով յեկեղեցւոջն Ողոմպիայ տիկնոջն ընծեռել զմահուն գործ, եւ սպանաներ: 80 Ըստ չարեացն կատարելոց զՓառանձեմայն ամենայն չարեաւք լցեալ զկամս կատարեր. եւ յանաւրէնն Փառանձեմայն պարզեւ առեալ չերիցուն զգեղն՝ ուստի իսկ ինքն էր ի նահանգէն Տարաւն գաւառէն, որում անուն Գոմկունք կոչին:

81 Այլ սուրբ կաթողիկոսն Ներսես այլ ոչ եւս յաւել տեսանել զերեսս թագաւորին Արշակայ մինչեւ յաւրն նորին կորստեան. այլ փոխանակ Ներսիսի զՉունակ ոմն անուն, եւ կացուցին փոխանակ նորա զլուխ քրիստոնէութեանն. եւ էր ստրուկ ի ստրկաց արթունի: 82 Ապա հրաման տայր թագաւորն՝ կոչել զամենայն եպիսկոպոս Յայոց աշխարհին, զի եկեսցեն ձեռնադրեսցեն զՉունակն ի կաթողիկոսութեան Յայոց: 83 Եւ ոչ մի ոք ոչ հաւանեաց զայլ բայց միայն Աղձնեաց եւ Կորդուաց եպիսկոպոսք եկին, եւ զՉունակն ձեռնադրեցին ի կաթողիկոսութիւն ըստ հրամանի թագաւորին: 84 Եւ էր Չոնակն այր զգաւն, եւ ոչ ինչ ունէր լեզու յանդիմանութեան կամ խրատու, այլ հաւանեալ էր թագաւորին զինչ եւ նա գործիցէ:

## ԳԼՈՒԽ ԺԶ.

1 Յաղագս թէ ո՛րպէս կամ զհա՛րդ կոչեցեալ եղեւ Արշակ արքայ Յայոց ի Շապիոյ արքայէ Պարսից, կամ զհա՛րդ մեծարեցաւ ի նմանէն մեծապէս. կամ զհա՛րդ Վասակ Մամիկոնեան սպարապետն Յայոց սպանաներ զսորակալ ասպաստանին

1 Յոր. ի բանս